

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա առթիվ

Սիրելի՛ երիտասարդներ, շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ:

Հարգելի՛ գործընկերներ, մենք շատ ենք կարևորում և՛ ձեր գործուն մասնակցությունը մեր երկրի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, և՛ ձեր ակտիվ ներգրավվածությունը միջազգային երիտասարդական կառույցներում ու ծրագրերում: Մենք ձգտում ենք հնարավորինս նպաստել այդ գործընթացներին, ստեղծել բարենպաստ պայմաններ ձեր կայացման ու զարգացման համար՝ ի շահ մեր երկրի զարգացման և հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման:

Շնորհավորում եմ քեզ, հայոց բանակի երիտասարդ զինվոր, քո ուժը, քաջությունն ու անձնվիրությունն են Հայաստանի և Արցախի անվտանգության գլխավոր գրավականները:

Այս տարի համայն հայ երիտասարդությունը և աշխարհի առաջադեմ երիտասարդությունը ևս նշում են պատմական հայրենիքում օսմանյան կայսրության կողմից բնաջնջված ավելի քան 1,5 միլիոն մեր հայրենակիցների հիշատակի ոգեկոչման և հայ ժողովրդի հայրենագրկման 100-րդ տարելիցը:

Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար մեր պայքարում ևս շատ կարևոր ու ծանրակշիռ են երիտասարդության դերն ու մասնակցությունը: Պայքար, որի նպատակը ոչ միայն պատմական իրողության արձանագրումն է, դրա հետևանքների վերացումը, մարդկային արժեքների վերահաստատումը, այլև նմանաբնույթ նոր ոճիրների կանխումը:

Ուստի այսօր դիմում եմ ձեզ առանձնահատուկ կոչով՝ ձեր բոլոր ուժերն ու կարողությունները, գիտելիքներն ու կամքը, ինչպես նաև միջազգային կապերը ներդրե՛ք՝ մեր հայրենիքը հզորացնելու, նաև աշխարհի երիտասարդների հետ համայն մարդկության խաղաղ ու անվտանգ ապագան կերտելու համար:

Կրկին շնորհավորում եմ ձեզ՝ մաղթելով նախաձեռնողականություն, նորարարական գաղափարներ և խանդավառություն:

12.08.2015 թ.